

ՎՈՒՈՒԱ-Ի ԿԱԶՄԱԿՈՐՈՒՄՆ ՈՒ ՏԱՐԱԾԱՇՐԱՎԱՆԱՅԻՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
/1990-ական թթ. Վերջ-2004թ./^{*}

Գարիկ Քերյան

Խորհրդային Միության փլուզումից հետո և՝ ԱՄՆ-ը, և Եվրոպական Միությունը միշտ էլ վարել են հետխորհրդային տարածությունում ռուսական ազդեցության գոտին հնարավորինս սահմանափակելու և կրծատելու քաղաքականություն։ Ներկա ուկրաինական ճգանաժամը և նոր սարք պատերազմի սկսման վտանգը այդ քանամյա քաղաքականության անմիջական պտուղներն են։ Ուստական ազդեցության տնտեսական և քաղաքական կրծատման միջոցների թվում կիրառվում է նաև հետխորհրդային պետությունների մասնակցությամբ միջայտական կառույցների ստեղծումը՝ որպես այլ նոր սարք ԱՊՀ-ին և, ինչու չէ, նաև Եվրասիական տնտեսական միությանը։ 1990-ական թթ. նման կառույց էր ՎՈՒՈՒԱ-ը, ներկայումս այդպիսի գործառույթ է իր վրա վերցրել ԵՄ-ի հետ Արևելյան Գործընկերության ծրագիրը։ Վերջինս արդեն կարողացել է երեք երկիր՝ Ուկրաինան, Մոլդովան և Վրաստանը դուրս բերել ռուսական ազդեցության գոտուց։ Այս առումով արդիական նշանակություն ունի ՎՈՒՈՒԱ-ի ստեղծման և գործունեության ուսումնասիրումը, որովհետև ապագայում բացառված չեն նրա վերակենդնացման նոր փորձերի կիրառումները Արևմուտքի կողմից։ Չպետք է մոռանալ նաև կոչու արձագանքը և բացասական ազդեցությունը ռուսական կողմից, որն, անշուշտ, ազդում է նաև ՌԴ-ի հետ երկկողմանի հարաբերությունների վրա։ Փորձենք այս դիտանկյունից անդրադառնալ ռուս-ադրբեջանական հարաբերությունների որոշ զարգացումներին։

Մինչ բուն թեմային անցնելը՝ նշենք, որ ռուսական կողմը, լավ հասկանալով արևմտյան ստրատեգների հեռահար նպատակները, ծգուում էր «հեռացողներին» պահելու նոր ինտեգրացիոն նախաձեռնություններով։ Օրինակ՝ 1996թ. հունիսին կովկասյան 3 հանրապետությունների հեկավարների հանդիպում կայացավ Կիվովոլսկում, որտեղ Մոսկվան առաջարկեց ծրագիր Կովկասի համար՝ հիմնված կովկասյան պետությունների տարածքային ամբողջականության և ինքնիշխանության հարգման սկզբունքների, խաղաղության և կայունության պահպանման վրա։ Առաջարկվում էր նաև ստեղծել միջնորդական կառույցներ հակամարտությունների կարգավորման նպատակով, ամրապնել համագործակցությունը Թուրքիայի և Իրանի հետ, միևնույն ժամանակ կանխել ոչ տարածաշրջանային պետությունների (ամենից առաջ ԱՄՆ-ի) ներթափանցումը Կովկաս [1]։ Սակայն ծանրության նժամը Արևմուտքի կողմն էր։ 1997թ. հոկտեմբերի 10-11-ը ԱՊՀ 4 պետությունների՝ Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի հեկավարները, որոնք Ստրաբուրգ էին ժամանել մասնակցելու Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների դեկավարների նիստին, համաձայնության եկան ստեղծելու 4 պետությունների բլոկ (ՎՈՒՈՒ-չորս պետությունների ամվանումների առաջին տակերը), նշելով, որ այդ պետությունները ունեն միշտ ընդհանուր շահեր և կարող են փոխարածորեն համագործակցել այդ շահերին հասնելու նպատակով։ 1999թ. ապրիլի 24-ին պետությունների դաշինքին միացավ նաև

*Հոդվածն ընդունվել է 20.11.2014:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը։

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Ուգրեկստանը[2] որից հետո ՎՈՒԱՄ-ը, սկսեց կոչվել ՎՈՒՈՒԱՄ: Ուգրեկստանը ծգուում էր հասնելու արտաքին առևտորի կախվածության սահմանափակմանը Ռուսաստանից և ռուսական տարածքը շրջանցող առևտրական ուղիների գործարկմանը: Ամենայն հավանականությամբ հենց դա հանդիսացավ այն խթանը, որ Ուգրեկստանը անդամակցի ՎՈՒՈՒԱՄ-ին: Քաղաքագիտական հետազոտություններում նշում են հետևյալ ընդհանուր շահերը, որոնք հանդիսանում էին ՎՈՒՈՒԱՄ-ի ստեղծման իհմքը:

1. ՎՈՒՈՒԱՄ-ի պետությունների համագործակցության գիշավոր պատճառը կասայան նավթն էր: Վրաստանը, Ռուսականը և Մոլդովան ամրողությամբ կախված են էներգակիրների ներմուծումից: Նախկինում նրանք ստանում էին դրանք Ռուսաստանից: Աղրբեջանը, ակտիվորեն պաշտպանելով հիմնական արտահանման նավթամուղի անցկացումը Վրաստանի վրայով դեպի Թուրքիայի նավահանգիստ Ձեյիան, մտադիր չէր հրաժարվել նավթի արտահանման 3-րդ ուղղությունից՝ Վրաստանի և Սև ծովի վրայով դեպի Եվրոպական պետություններ Ռուսականայի, Մոլդովայի տարածքով: Եթե ինչ-որ պատճառներով Բաքու-Ձեյիան նավթամուղի ծրագիրը չիրականանար, Աղրբեջանը կունենար նավթի տեղափոխման այլընտրանքային ուղի՝ բացի ռուսականից:

2. ՎՈՒՈՒԱՄ-ի երկրները գտնվում են Եվրոպայի և Ասիայի միջև արդեն ակտիվորեն զարգացող տրանսպորտային «միջանցքի» ճանապարհին: Եվրոպայի երկրներից մարդատար և բեռնատար տրանսպորտը Մոլդովայի, Ռուսականայի, Վրաստանի, Աղրբեջանի տարածքով հասնում է Կենտրոնական Ասիա: Ռուսաստանը 21-րդ դարի կարևոր առևտրատրանսպորտային ուղիներից հեռացնելու համար այս ճանապարհի կենսագործունելության ապահովումը ԵՄ ռազմավարական նախատակն է, որին ակտիվորեն աջակցում է ԱՄՄ-ը: Վրաստահմանյան տեսաբանները նշում են, որ Աղրբեջանը հետաքրքրում է Ռուսականային որպես մի երկիր, որը տիրապետում է նավթային հոկայական պաշարների, իսկ Ռուսական հետաքրքրում է Աղրբեջանին իր աշխարհաքաղաքական դիրքով, որը հնարավորություն է ընձեռում արտահանել նավթ Եվրոպա՝ շրջանցելով Ռուսաստանը: Դեռևս 1996թ. Կիևը միացավ Մերախյան համաձայնագրին՝ Աղրբեջանի, Վրաստանի և Թուրքմենստանի միջև, որը կարգավորում էր տրանզիտային փոխադրումները: 1996թ. Օդեսայում Ռուսականայի, Աղրբեջանի և Վրաստանի միջև կնքվեց համաձայնագիր՝ Եվրասիական տրանսպորտային միջանցքի ստեղծման համագործակցության վերաբերյալ:

3. Էթնոքաղաքական հակամարտությունների գոյությունը՝ հարաբարդյան, արխազական, հարավուեթական և մերձնեստրյան/, որոնք միջազգային ասյաններում համագարժակցության անհրաժեշտություն էին պահանջում:

4. ՎՈՒՈՒԱՄ-ի երկրների ցանկությունը հեռանալի Ռուսաստանից ոչ միայն տրանսպորտային և էներգենտիկ ոլորտներում, այլև քաղաքական բնագավառում՝ հակադրվելով Ռուսաստանի առաջատար դերին ԱՊՀ-ում:

Արևմտյան քաղաքագետների կարծիքով՝ ՎՈՒՈՒԱՄ-ը պետությունների անվտանգության վիճակի բնական պատասխանն է, ինչը զգում էին նորանկախ պետությունները Խորհրդային Միության փլուզումից հետո, և երբ ծգուում առաջացավ գտնելու նոր կառուցներ՝ ավելի անվտանգ միջավայր ստեղծելու համար[3]:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

ՎՈՒՈՒՍ-ի գործունեության առավել կոնկրետ հարցերի քննարկումը կայացավ Քաքվում 1997թ. նոյեմբերին, անդամ պետությունների արտգործնախարարների մասնակցությամբ: Ստորագրվեց արձանագրություն, որը նախատեսում էր ՎՈՒՈՒՍ-ի երկրների համագործակցություն քաղաքական ոլորտում, եվրասիական տրանսպորտային միջանցքի զարգացման ոլորտում, անջատողական և տարածաշրջանային հակամարտությունների հարցում և այլն [4]:

Կարևոր նշանակություն ունեցավ ՎՈՒՈՒՍ-ի ներկայացուցիչների հանդիպումը 1998թ. հոկտեմբերին Կաշինգունում: Հանդիպման ընթացքում ծեռօր բերվեց միասնական գեկուց ՎՈՒՈՒՍ-ի պետությունների համագործակցության վերաբերյալ ողջ աշխարհում ֆինանսական ճգնաժամի պայմաններում: Հանդիպման մասնակիցները նշեցին, որ ՎՈՒՈՒՍ-ի երկրների տնտեսական կայունության համար անհրաժեշտ է զարգացած երկրների օգնությունը, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների համագործակցության ամրապնդումը: Ստեղծվում էր ՎՈՒՈՒՍ-ի պետությունների նախագահների խորհրդությունը, որը ղեկավարեց Հ.Ալիկը, ինչը ընդունվեց Աղրբեջանի արածաւար դիրքը կազմակերպությունում: Որոշվեց ստեղծել աշխատանքային Քարտուղարություն և Քարտուղարության աշխատանքների շնորհիվ արագացնել Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցքի ստեղծումը և զարգացումը [5]:

1999թ. ապրիլին ՆԱՏՕ-ի Կաշինգունյան ամենամյա նիստը ՎՈՒՈՒՍ-ի անդամների կողմից օգտագործվեց բանակցություններ վարելու նպատակով: Մասնակից երկրները նշեցին, որ համարվորություն է ստեղծվել համագործակցելու տնտեսության և էներգետիկայի ոլորտներում, և նավթամուղերի անվտանգության ապահովումը բարձրացնում է ՎՈՒՈՒՍ-ի պատասխանատվությունը տարածաշրջանում կայունություն պահպանելու համար: Միաժամանակ հաշվի առնելով ԱՍՄ-ի շահերը՝ Աղրբեջանը ծգուում էր հեռու մնալու իրանից[6]: Սակայն ՆԱՏՕ-ն ծերնպահ էր մնում ՎՈՒՈՒՍ-ի հետ համագործակցությունից երկու հիմնական պատճառներով: Առաջին հերթին ՎՈՒՈՒՍ-ի անդամ-երկրները հաստատում էին, որ իրենց միավորումը չի կրում ռազմական բնույթ, ինչը ոչ հստակ է դարձնում, թե ինչ հիմքով այն կարող է համագործակցել այնպիսի ռազմական դաշինքի հետ, ինչպիսին ՆԱՏՕ-ն է: Մուկվան համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ ընդունում էր բացասաբար, որովհետև դրանում տեսնում էր ԱՊՀ-ում Ռուսաստանի ազետեցությունը կրծատելու միտում: Այնուամենայնիվ կարելի է ասել, որ ՆԱՏՕ-ն լրեւայն օժանդակում էր ՎՈՒՈՒՍ-ին [7]: 2001-2004թթ. ՎՈՒՈՒՍ-ին հատկացրել էր մոտավորապես 2 մլրդ դոլար[8]: ՎՈՒՈՒՍ-ի երկրների ղեկավարությունները բացահայտորեն հայտարարում էին, որ ցանկանում են անդամակցել Հյուսիսաւանության դաշինքին: Աղրբեջանի նախկին արտգործնախարար Տ.Զուլգուֆարովը հայտարարեց 1999թ. սկզբին ՎՈՒՈՒՍ-ի և ՆԱՏՕ-ի միջև «հասուկ» հարաբերությունների անհրաժեշտության մասին: 1999թ. սեպտեմբերին Բաքում, սեմինարի ժամանակ, որը նվիրված էր երկրի եվրասիանատյան կառույցներ ինտեգրվելուն, ՆԱՏՕ մտնելու մասին խոսվում էր ավելի բացահայտ: Աղրբեջանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելը դիտվում էր որպես հեռանկար, իսկ երկրի մասնակցությունը «Համագործակցություն հանուն խաղաղության» ժրագրին՝ որպես ուղի այդ նպատակին հասնելու համար[9]:

Պետք է նշել նաև, որ որոշ տարածայնություններ առաջացան ՎՈՒՈՒՍ-ի երկրների միջև Բաքու-Ջեյխան ծրագրի իրագործման հարցում: Դրանով էր պայմանավորված 1999թ-ին ՎՈՒՈՒՍ-ի երկրների միջև հարաբերությունների սարեցումը: Աղրբեջանի և Կրաստանի հետ կապերի ամրապնդման ակտիվություն էր ցուցաբերում Ռուսական, որը ծգուում էր թուացնել իր տնտեսական և էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

ՎՈՒՈՒԱՍ-ի բոլոր անդամ երկրները նշում էին, որ այդ միավորումը չի համարվում քաղաքական, և հատկապես ռազմական բլոկ, նրանց միավորում են միայն ընդհանուր շահերը Եվրասիական տրանսպորտային ուղու զարգացման և «ազրեսիվ սեպարատիզմի» ընդհանուր քննադատման հարցում: Սակայն միավորման գործունեության սկզբնական շրջանից նկատվեցին նաև ռազմական հեռանկարներ: Մուսկվան ոչ խրախուսական վերաբերմունք ունեցավ ՎՈՒՈՒԱՍ-ի ստեղծման նկատմամբ: Նա ձգում էր վերականգնելու իր վերահսկողությունը և ազդեցությունը ԱՊՀ երկրների նկատմամբ, հետևաբար, ՎՈՒՈՒԱՍ-ը օրիենտիվ խոչընդոտ էր այդ նպատակի իրագործման համար: Զգուելով ամրապնդել իր ազդեցությունը հետխորհրդային տարածքներում՝ Ուսասատանը միշտ էլ փորձում է խանգարել ՎՈՒՈՒԱՍ-ի զարգացումը և առնվազն նվազեցնել նրա ազդեցությունն այլ երկրների վրա: Եթե հետագայում էլ ուսական քաղաքականությունն ուղղված լինի «տարածաշրջանում դոմինանտության համար պայքարին» և ստատուս-քվոյի պահպանանը, ապա ՎՈՒՈՒԱՍ-ը խոչընդոտ կմնա այդ նպատակին համեմու համար: Առկա է նաև այն տեսակետը, ըստ որի՝ տարածաշրջանի կայունության համար բարենպաստ է ՎՈՒՈՒԱՍ-ի գոյությունը, իբր Ուսասատանի և ՎՈՒՈՒԱՍ-ի համագործակցությունը կարող էր նվազեցնել այս տարածաշրջանում ապակայունացման գործուները, քանի որ Ուսասատանը և ՎՈՒՈՒԱՍ-ը ունեն նաև ընդհանուր շահեր. տարածաշրջանային կայունության ամրապնդում, տերորիզմի և թրանյութերի դեմ պայքարի[10]: Սակայն Ուսասատանը շարունակում էր խոչընդոտել տարածաշրջանային այս միավորման գործունեությանը՝ փորձելով ՎՈՒՈՒԱՍ-ի գործունեությունը բնութագրել սպառնալիք Ուսասատանի ազգային շահերին:

2003-2004թթ. ՎՈՒՈՒԱՍ-ը գնում էր թուլացման ուղիով: Այդ վիճակի պատճառները բացասրվում են մի շալք գործուներով: Դրանցից առաջնայիններն են՝ կազմակերպության պոտենցիալ լիդեր Ուկրաինայի պատիվ, հաճախ հակասական գործունեությունը, կառավարման ներքին-ինստիտուցիոնալ, ադմինիստրատիվ թուլացմանը, անդամ պետությունների արտաքին քաղաքական քայլերի անհամաձայնությունը, շահերի անհավասարակշռությունը, անդամ երկրների դիվանագիտական հնության և փորձի պակասը, ֆինանսական ապահովման անբավարությունը և այլն[11]:

Լարվածությունը ՎՈՒՈՒԱՍ-ի անդամ պետությունների միջև գնայով ավելի էր խորանում: Ինչպես հայտարարել է Ուգրեկստանի Արտաքին տնտեսական կապերի նախարարության աշխատակիցներից մեկը, ՎՈՒՈՒԱՍ անդամ երկրների հետ մշտական խնդիրները առաջ են բերում թուրքմենական արտահանողների զայրույթը[12]: Ի վերջո եղավ այնպես, որ 2005թ. մայիսին Ուգրեկստանի նախագահ Քարիմովը պաշտոնապես տեղեկացրեց Մոլդովայի նախագահ Վլադիմիր Կորոնինին Ուգրեկստանի՝ ՎՈՒՈՒԱՍ-ի կազմից դուրս գալու մասին: Փաստաթղթում նշվում էր. «Ուգրեկստանը անհրաժեշտ է համարում հայտարարել ՎՈՒՈՒԱՍ-ի կազմից դուրս գալու մասին՝ կապված ի սկզբանե հայտարարված նպատակների և խնդիրների էական փոփոխության հետո»[13]: Միևնույն ժամանակ Ուգրեկստանը հայտարարում է իր պատրաստակամության մասին՝ համագործակցել ՎՈՒՈՒԱՍ անդամ պետությունների հետ տնտեսական և այլ հարցերի լուծման ժամանակ երկողմանիության հիմնարով[14]:

Համաձայն 2001թ. հունիսի 6-ին Յալթայում ստորագրված ՎՈՒՈՒԱՍ-ի Խարտիայի (Կանոնադրության), որի ընդունմամբ, փաստորեն, հատակեցվեց այդ կազմակերպության իրավական կարգավիճակը, կազմակերպության խնդիրներն են՝ գործունեության բոլոր ոլորտներում տարածաշրջանային անվտանգության ամրապնդում, անդամ պետությունների արևտրատնտեսական կապերի ամրապնդում ու ընդլայնում, մասնակից երկրների տարածքներում նրանց շահերի համաձայն տրամապորտային և հաղորդակ-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

ցույքան ուղիների գարգացում և արդյունավետ օգտագործում, միջազգային կազմակերպությունների շրջանակներում փոխգործակցություն և այլն: Վերոհիշյալ փաստաթղթում ամրագրվել են նաև համագործակցության հետևյալ հիմնական ուղղությունները. տնտեսություն, գիտություն, տեխնոլոգիաներ և շրջակա միջավայր, տրանսպորտային, էներգետիկ և հեռուստահաղորդակցությունների ենթակառուցվածք, ներդրումային և ֆինանսական համատեղ ծրագրեր, մշակույթ և այլն[15]:

Թեև այդ կազմակերպության գագաթաժողովների և հանդիպումների ընթացքում, ըստ էության, չեն քննարկվում նրա շրջանակներում ռազմական համագործակցություն ծավալելու հարցերը, սակայն վերոհիշյալ խարսխայում ամրագրվել է այն դրույթը, համաձայն որի՝ մասմակից երկրները կարող են հանդես գալ համագործակցության ոլորտներն ընդունելու առաջարկությամբ: Ի դեպ ՎՈՒԴԱՍ-ը փորձել է մշակել նաև ռազմական բնույթի ծրագրեր: Անդամ-պետությունների պաշտպանության նախարարների միջև կայացած մի քանի հանդիպումների ընթացքում քննարկվել է նավթամոլութերի պահպանության, խաղաղարար ուժերի ծևավորման հարցը: [16] Չնայած այս ամենին՝ հարկ է փաստել նաև, որ ուկրաինական կողմը ՎՈՒԴԱՍ-ը դիտում էր որպես տնտեսական համագործակցության կարողց՝ բացառելով ռազմական համագործակցությունը այդ կառույցում: Այնուամենայնիվ, նկատի ունենալով ՎՈՒԴԱՍ-ի նկատմամբ ՆԱՏՕ-ի առանձնահատուկ ուշադրությունը[17] կարելի է ենթադրել, որ ռազմական համագործակցությունը կարող էր և լիարժեք գարգացում ունենալ: Այս ամենն անկանաչ չի կարող չհարուցել Հայաստանի դեկապարության որոշակի մտահոգությունը[18]:

Այս ենթատեքստում կցանկանայինք անդրադարձնալ նաև ԱՄՆ և Ռուսաստանի դիրքորոշումներին՝ ՎՈՒԴԱՍ-ի նկատմամբ, որը մենք կարևորում ենք թեմայի հետագության շրջանակներում: ԱՄՆ-ի իշխանությունները, վերոհիշյալ կազմակերպության ստեղծման պահից, բազմից հայտարարել են, որ շատ լավ հնարավորություններ են տեսնում ԱՄՆ-ի և ՎՈՒԴԱՍ-ի միջև համագործակցության համար՝ նշելով, որ անդամ-պետությունները դրական համագործակցություն կարող են ակնկալել ԱՄՆ-ի կողմից: Նրանք նշում էին նաև, որ ՎՈՒԴԱՍ-ին չեն դիտարկում որպես հակառակության միավորում, քանի որ այդ խմբում ներառված երկրները միավորված են էներգետիկայի քնագավառում հետաքրքրություններով: Իսկ Ռուսաստանի մասով նշենք, որ նախագահ Վ.Պուտինը 2001թ. հունիսի 1-ին Սինսկում կայացած ԱՊՀ երկրների նախագահների գագաթաժողովի ժամանակ ՎՈՒԴԱՍ-ի վերաբերյալ հայտարարեց հետևյալը. «ԱՊՀ ներսում այնպիսի կազմակերպությունների գոյությունը, ինչպիսիք են՝ Եվրասիական միությունը և ՎՈՒԴԱՍ-ը, չեն բանդում ԱՊՀ-ը, այլ հակառակը՝ ամրապնդում են այն»: Հիմա դժվար է ասել, թե այն ժամանակ որքանով էր դա անկեղծ ասված:

Այնուամենայնիվ, 2001թ. սկզբին Մոլդովայի խորհրդարանական ընտրություններում կոմունիստների ճնշող հաղթանակը, ՎՈՒԴԱՍ-ում Ուգբեկստանի մասնակցության որոշակի սարեցումը՝ իսլամ արմատականների ներքին և թալիբների արտաքին վտանգների ազդեցությամբ, և Ուկրաինայի ներքաղաքական սուր ճգնաժամները ի նկատի ունենալով՝ կարելի է եզրակացնել, որ ՎՈՒԴԱՍ-ի հետագա ուժեղացման և որպես միջազգային կազմակերպություն կառուցվածքային կայացման ժամապարհին հնարավոր է, որ ծագեն բազմաթիվ խոչընդուներ: Հատկանշական է, որ Մոլդովան բավականաչափ կշիռ չունենալու պատճառով և քաղաքական գործընթացների բերումով, հաճախ վերանայում էր ՎՈՒԴԱՍ-ին իր անդամակցության նպատակահարմարությունը[19]: Մասնավորապես, Մոլդովայի նախագահ Վ.Պուտինինը հայտարարում էր, որ վերոհիշյալ կազմակերպությունում իր երկրի համար հեռանկարներն այնքան էլ

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

պարզ չէին[20]: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Վ.Վորոնինը 2001թ. մայիսին անդամ-պետությունների ղեկավարներին առաջարկեց ՎՈՒՈՒՍ-ի շրջանակներում նախատեսվող բոլոր հանդիպումներին իրավիրել Ո՞՛Շ նախագահ Վ.Պուտինին[21]: Մեր կարծիքով ՎՈՒՈՒՍ-ը նշված ժամանակահատվածում լիարժեք միջազգային կազմակերպություն չղարձավ: Անդամ երկրների նպատակները բավականին տարրեր էին[22], անդամ-պետությունները բավականին տարատեսակ[23], իսկ այնուհետև այս կառույցը ետին պահ մղեց ԵՄ Արևելյան գործընկերության ծրագիրը:

ՎՈՒՈՒՍ-ի թուլացմանը նպաստեցին նաև վրաց-ադրբեջանական հարաբերությունների նոր գաղուացումները: 2003թ. նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցած «Վարդերի հեղափոխության» արդյունքում իշխանության եկած նախագահ Մ.Սահակաշվիլու օրոր Վրաստանի վարած տարածաշրջանային քաղաքականության մեջ նոր միտումներ նկատվեցին, ինչն իր հերթին հանգեցրեց պաշտոնական Բաքվի համարժեք արձագանքին:

Պետք է նշել, որ Վրաստանի նախորդ նախագահ է.Շնարդնաձեի օրոր Վրաստանը միանշանակ կերպով պաշտպանում էր Ադրբեջանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավիրտնամ գործում: Վրաստանի ղեկավարությունը գուգահեռներ էր անցկացնում նախկին ԽՍՀՄ տարածքում գոյություն ունեցող էրնոքաղաքական հակամարտությունների միջև (աբխազական, հարավօսական, մերձնեստրյան, դարաբաղյան)՝ դրանք բոլորը համարելով Մոսկվայի կողմից հովանավորվող անջատողական շարժումներ, որոնց միջցոցով Ռուսաստանը ծգուում էր պահպանելու իր ռազմաքաղաքական ազդեցությունը նախկին խորհրդային հանրապետություններում:

Մինչդեռ Մ. Սահակաշվիլու օրոր Վրաստանի տարածաշրջանային քաղաքականության մեջ պարզորշ կերպով առաջ եկավ մի կարևոր միտում: Վրաստանը սկսեց հավասարակշռված քաղաքականություն վարել Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ: Եթե նախորդ շրջանում Վրաստանը առանց բացառության, բոլոր տարածաշրջանային էրնոքաղաքական հակամարտությունների կարգավորման անհրաժեշտ նախապայման էր համարում տարածքային ամբողջականության սկզբունքի պահպանումը, ապա Մ. Սահակաշվիլին կարծես թե ձեռնպահ էր մնում Ղարաբաղի հարցում այդ սկզբունքը շեշտելուց: Նա նոյնիսկ խուսափում էր որևէ պաշտոնական հայտարարություն անելուց լՂՀ-ում կայացած ընտրությունների կապակցությամբ: Վրաստանի որդեգրած չեղող և անկողմնակալ դիրքորոշումը հայ-ադրբեջանական հակամարտությունում, անշուշտ, վկայում է Վրաստանին իր կողմը քաշելու Բաքվի քաղաքականության անհաջողության մասին: Վրաստանի նոր իշխանությունների՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում հետզինետե անկողմնակալ դարձող դիրքորոշման մեկ այլ արտահայտություն դարձավ նաև այն, որ Վրաստանը չմասնակցեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեյում Ադրբեջանի կողմից առաջ քաշված քանաձեկ նախագիր հարցում քվեարկությամբ:

Վրաստանի իր նոր նախագահի պաշտոնավարման հենց սկզբից որդեգրեց Հարավային Կովկասի տարածաշրջանում Արևմուտքի թիվ մեկ գործընկեր դաւնալու և դրա հիման վրա տարածաշրջանի առավել ազդեցիկ պետության կերածվելու ռազմավարությունը: Ըստ որում, եթե Վրաստանն այդ հարցում ծգուում է օգտագործելու տրանզիտ պետության իր առավելությունները, ինչպես նաև Ադրբեջանի համեմատությամբ իր ձեռք բերած առաջընթացը ժողովրդավարական պետություն կառուցելու գործում, ապա Ադրբեջանն իր հերթին փորձում է օգտագործել իր տնտեսական ներուժը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Վրաստանի տարածաշրջանային քաղաքականության մեջ ի հայտ եկած այս բոլոր միտումները չեն կարող չառաջացնել Աղրբեջանի կտրուկ հակագործությունը: Ի թիվս վերոհիշյալ գործոնների երկողմ հարաբերություններում տարածայնությունների և նույնիսկ լարվածության աճի կարևորագույն պատճառներից մեկը դարձավ այն, որ Վրաստանի ղեկավարությունը, ստվերային տնտեսության դեմ պայքարի շրջանակներում ակտիվ գործունեություն սկսեց իր պետական սահմանների մաքսային վերահսկողությունն ուժեղացնելու, մաքսանենգությանը վերջ տալու ուղղությամբ: Նման քաղաքականությունը հարվածեց նաև Քվենո-Քարթի մարզի բնակչությանը, որոնք հիմնականում աղբեջանցիներ են, և որոնցից շատերը, օգտվելով նախորդ իշխանությունների թուլությունից, անարգել կերպով գրաղվում էին մաքսանենգությամբ: Վրաստանի ղեկավարությունը Աղրբեջանի ակնհայտ դժգոհությունն առաջացրեց նաև նրանով, որ, պատճառաբանելով շրջակա միջավայրի պահպանման անհրաժեշտությունը, լրացրից գումարներ պահանջեց Բաքու-Ֆերիան նավթամուղի օպերատոր բրիտանական «Բրիթիշ Պետրոլյեում» ընկերությունից, ինչի արդյունքում խախտվեցին նավթատարը հնարավորին չափով արագ կառուցելու ծրագրերը, ինչպես նաև կտրուկ կերպով ածեցին կառուցման ժախսերը:

Աղրբեջանը թերևս չէր կարող չարձագանքել Վրաստանի արտաքին քաղաքականության այս նոր միտումներին: Արդյունքում Աղրբեջանի նախաձեռնությամբ սկսվեց իսկական տրանսպորտային պատերազմ երկու երկրների միջև. 2004թ. նոյեմբերի կետերից Աղրբեջանը սկսեց կատարել իր տարածքով դեպի Վրաստան ուղղվող երկաթուղային տրանսպորտի մուտքը Վրաստան: Որպես պաշտոնական պատճառ Աղրբեջանի ղեկավարությունը նշում էր այն, որ 2004թ. հունիսի 14-ին երկու երկրների միջև կմքված երկաթուղային տրանսպորտի գործունեության համակարգման մասին նոր միջկառավարական համաձայնագրի չորրորդ հոդվածի համաձայն չէր թուլատրվում Աղրբեջանից ստացված բեռների մուտքը դեպի Հայաստան: Արդյունքում վրաց-աղրբեջանական սահմանում կրտսակվեցին հարյուրավոր վագոն բեռներ, որոնց միայն մի փոքր մասին մանրամասն ստուգումից հետո թույլ էր տրվում անցնել դեպի Վրաստան:

Այս ամենի կապակցությամբ հայտարարությամբ հանդես եկավ նաև Աղրբեջանի նախագահը: Դեկտեմբերին Մեծ Բրիտանիա կատարած այցի շրջանակներում իր տված հարցազրույցում ի. Ալիկը նշեց, որ վրաց-աղրբեջանական սահմանում առաջացած հիմնախնդիրը կապված է այն բանի հետ, որ Կասպից ծովի արևելյան մասից ստացվող բեռները տեղափոխվում են Հայաստան: Ալիկը դա անվանեց ոչ օրինական քայլ, քանի որ Աղրբեջանը ՏՐԱՍԵԿԱ-ին միացել էր այն պայմանով, որ իր տարածքով անցնող բեռները չտեղափոխվեին Հայաստան:

Բացի այդ՝ նոյն օրերին Վրաստանի իշխանությունները հրահանգեցին ֆինանսական ուստիկանությանը մաքսանենգության դեմ պայքարի շրջանակներում լայնածավալ ստուգումներ անցկացնել աղրբեջանաբնակ տարածքներում, որի հրականացման ընթացքում գրանցվեցին լուրջ միջադեպեր, որոնք սպառնում էին վերածել էրնիկական հողի վրա ընդհարումների:

Վրաստանի դեմ, որպես ազդեցության լճակ, Աղրբեջանը օգտագործեց նաև Քվենո-Քարթի մարզի աղրբեջանական բնակչությանը: Օգտվելով Վրաստանի աղրբեջանցիների սոցիալական վատ պայմաններից՝ պաշտոնական Բաքուն հրահրեց նրանց զանգվածային դժգոհությունները գյուղատնտեսական հողերի անարդարացի բաշխման կապակցությամբ: Տեղի ունեցած ազգամիջյան բախումների հետևանքով եղան նաև սպառնվածներ, ինչի արդյունքում 2004թ. դեկտեմբերին քննարկումներ տեղի ունեցան Աղրբեջանի Միլլի Մեջլիսում, խիստ հոդվածներ զանգվածային լրատվության

ՄԵՄՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ԼՐԱՑՈՒ 2015

միջոցներում և այլն: Միլի մեջիսի խոսնակ Մուրթուզ Ակեսքերովը որոշում ընդունեց աղրբեջանցի խորհրդարանականների պատվիրակություն ուղարկել Վրաստան՝ Քվեմո-Քարթի աղրբեջանական բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի ուսումնափրաման և այդ հարցում Վրաստանի ղեկավարության դիրքորոշմանը ծանոթանալու նպատակով: Սակայն մեծ հաշվով սա ևս չօգնեց, և արդյունքում՝ մինչև ղեկտեմբերի վերջը երկու ռազմավարական գործընկերների միջև իրավիճակը աչքի էր զնկնում հատկապես նրանով, որ Կողմերից և ոչ մեկը չէր ցանկանում որևէ գիշումների գնայ:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ համապատասխան պատճենների բերումով Աղրբեջանը այս ժամանակահատվածում շարունակում էր Վրաստանը դիտարկել որպես իր ռազմավարական գործընկեր: Երկու երկրների շահերը համընկնում են մի շարք առանձքային ոլորտներում, մասնավորապես միջազգային տրանսպորտային միջանցքներին անդամակցության գործում: Այսպես օրինակ՝ Վրաստանը և Աղրբեջանը 2004թ. ղեկտեմբերի վերջին համաձայնության հասան Կարս-Ախալքալաք երկարուղու կառուցման վերաբերյալ: Թե՛ Վրաստանը Աղրբեջանի համար և թե՛ Աղրբեջանը Վրաստանի համար խաղում են կարևոր դեր արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու գործում: Երկու երկրներն էլ մերքավել են իրենց տարածքային ամբողջականության համար մեծ վտանգ ներկայացնող հակամարտությունների մեջ: Երկու պետությունն էլ հստակ ուղղություն են վերցրել դեպի Հյուսիսաւանույան դաշինք: Այս բոլոր համագանձները հաշվի առնելով՝ կարող ենք նշել, որ Վրաց-աղրբեջանական ռազմավարական գործընկերությունը ունի նաև օբյեկտիվ հիմքեր:

Առավել նվազ կարևորություն ունեին Աղրբեջանի և Մոլդովայի հարաբերությունները, սակայն այստեղ էլ նկատվեցին որոշակի նոր զարգացումներ: ԽԱՀՄ-ի փլուզումից հետո Աղրբեջանի և Մոլդովայի հարաբերությունները բավականին սառն էին մինչև ՎՈՒՈՒՄ-ի ստեղծումը: 1997թ. նոյեմբերին նախագահներ Լուչինսկին և Ավելը ստորագրեցին բարեկամության և համագործակցության պայմանագիր, որտեղ հստակեցվեցին երկրների դիրքերը՝ կապված երկու պետությունների անկախության ամրապնդման, տարածքային ամբողջականության ձանաշնան, սեպարատիզմի և ահաբեկչության դեմ պայքարի հետ: 1998թ. սեպտեմբերին Մոլդովայի նախագահը հայտարեց, որ եթե նավթամուղը անցնի Մոլդովայի տարածքով, ապա նա կհատկացնի բոլոր անհրաժեշտ երաշխիքները դրա կայուն գործունեության ապահովման համար: Մոլդովան զգուշում էր մերգրավվել Ասիան Եվրոպային միացնող ներգետիկ տրանսպորտային միջանցքում: 1998թ. սեպտեմբերին Մոլդովայի նախագահը հայտարարեց, որ եթե նավթամուղը անցնի Մոլդովայի տարածքով, ապա նա կհատկացնի բոլոր անհրաժեշտ երաշխիքները դրա կայուն գործունեության ապահովման համար[24]: Աղրբեջանի և Մոլդովայի հակասությունը կայանում էր նրանում, որ ի տարբերություն Աղրբեջանի, որը հետաքրքրակած էր ՎՈՒՈՒՄ-ի երկրների քաղաքական ինտեգրացմանը, որպես հաստուկ կառույց ԱՊՀ-ի շրջանակներում, ինչպես նաև իրենց միջև ռազմական համագործակցությանը, Մոլդովան այդ հարցերին լուրջ նշանակություն չէր տալիս: Եթե Բաքուն զգուշում էր անդամագրելու ՆԱՏՕ-ին, ապա Մոլդովան սահմանափակվում էր միայն «Համագործակցություն հանուն խաղաղության ծրագրի» շրջանավայրում իրականացվող գործունեությամբ: Աղրբեջանը դարձավ ԱՊՀ-ի ներսում «հաստուկ կառույցի» կենտրոնը: Այն պատճառով, որ Աղրբեջանի արևմտյան կողմում գտնվող պետությունները կարող են ծերը բերել կասպյան նավթ՝ շրջանցելով Ռուսաստանի տարածքը: Նաև այն պատճառով, որ Աղրբեջանը գտնվում է Եվրասիական պողուածանի տարածքը: Նաև այն պատճառով, որ Աղրբեջանը գտնվում է Եվրոպան Ասիային միացնող տարածք, որը գերծ է պահում Ռուսաստանի և Իրանի հետ շփում ունենալուց:

ՄԵՍՐՈՊ ՄԱՀԾՈՅ ՀԱԽԱՍՏԱՐԻՆ ԼՐԱՏՈՒ 2015

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ, չնայած հակասական գարգացումներին, Ադրբեյջանի մասնակցությունը ՎՈՒՈՒԱՄ-ին ռուս-ադրբեյջանական և ԱՊՀ մյուս երկրների հետ հարաբերությունների վրա ազդեցության լուրջ գործոն է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Парахонский Б., ГУУАМ: путь к стратегической стабильности на Кавказе //Центральная Азия и Кавказ, 6(12), 2000
2. Белов О. А., Азербайджан в составе ГУУАМ (Грузия, Узбекистан, Украина, Азербайджан, Молдавия): Особые отношения в рамках СНГ //Независимый Азербайджан, под редакцией Е.М.Кожокина, том 2, М., 2000, стр. 21
3. ГУУАМ-Порядок и кооперация в постсоветском пространстве // Международная конференция Фонда Фридриха Эберта, Тбилиси, 2002, стр. 26
4. Белов О.А. Աշխատությունը, էջ 22
5. Matreeva A. , Hiscock D., The Caucasus: Armed and Divided (Report) //Small arms and light weapons proliferation and humanitarian consequences in the Caucasus,Saferworld, 2003, стр. 24
6. Перепелица И., ГУУАМ в новом геополитическом и геоэкономическом окружении // Центральная Азия и Кавказ, 5 (17), 2001, стр.181
7. Кунэ Ф. , НАТО и Южный Кавказ // Кавказский Институт мира, демократии и развития, Тбилиси, 2003, стр.14
8. Матийчик Я., ГУУАМ: состояние, риски, перспективы //Центральная Азия и Кавказ (35), 2004, стр.142
9. Белов О.А. Աշխատությունը, էջ 39
- 10.Перепелица И., Աշխատությունը, էջ 183
- 11.Матийчик Я., Աշխատությունը, էջ 144
12. Рахимова Зульфия, Узбекистан в системе ГУУАМ и Шанхайской организации сотрудничества //Центральная Азия и Кавказ, 5(17), 2001, стр. 189
13. Узбекистан сокращает ГУУАМ на одну букву “<http://Lenta.ru/news/2005/05/26/uzbek/>
14. Узбекистан выходит из ГУУАМ ”<http://www.ru.com/06.05.2005>
15. Дегоев В., Игра на обоюдное поражение, “Независимая газета“, 23.05.2001.
16. Бадрак В., Военно-техническое сотрудничество ГУУАМ: миф или реальность? “Зеркало Недели”, 08.09.2001.
17. Fuller E., Introducing the Other GUAM, RFE/RL News line, 1 December 1997.
18. Мурадян И., Геоэкономические проблемы Кавказско-каспийского региона, Ер.,1999, стр. 112-113
19. Шакарянц С., Политика постсоветской России на Кавказе и ее перспективы, стр. 186.
- 20.Մախույան Տ., ԱՊՀ-ի լույս ու ատվերը, Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, 6, 2001, էջ15
21. Шакарянц С., Политика постсоветской России на Кавказе и ее перспективы, стр. 187.
22. Прейтер Д., Малярчук И. ГУУАМ: Экономические основы кооперации // Центральная Азия и Кавказ, 6(12) 2000, стр.162
23. Парахонский Б., ГУУАМ: путь к стратегической стабильности на Кавказе //Центральная Азия и Кавказ, 6(12), 2000, стр.39
24. Белов О.А. Աշխատությունը, էջ 47:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**ՎՈՒՈՒԱՍ-ի կազմավորումն ու տարածաշրջանային գործընթացների զարգացման
միտումները /1990-ական թթ. Վերջ-2004թ./
Գարիկ Քեռյան**

Ուսաստանի միջազգային դիրքերի թուլացումը 1990-ական թթ. նպաստեց հետևողիրդային տարածությունում անջատողական գործընթացների զարգացմանը: ԱՊՀ փոքր պետությունները սկսեցին ակտիվորեն այլընտրանք վնտրել և անվտահորեն վերաբերվել Ուսաստանի լիդերությանը: 1997թ. Ստրասբուրգում Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեյջանի և Մոլդովայի ներկայացուցիչները ստորագրեցին միություն ստեղծելու մասին համաձայնագիր, որը նրա մեջ մտած երկրների անունների առաջին տարերով անվանվեց ՎՈՒԱՍ: 1999-2005թթ. ՎՈՒԱՍ-ին անդամակցում էր Ուգրեկստանը, որից հետո այն կոչվում էր ՎՈՒՈՒԱՍ: Անդամ պետությունները Մուսկվայի ազգեցությունից դուրս գալու ուղիներ էին փնտրում այն համարելով վճարակար իրենց ազգային անվտանգության համար:

Թանալի բառեր՝ Ադրբեյջան, ՎՈՒՈՒԱՍ, կասպյան նավթ, տրանսպորտային միջանցք, տնտեսական համագործակցություն, ռազմաքաղաքական միավորում, հակառական դիրքորոշում, Ուկրաինա, Վրաստան, Բաքու-Ջեյխան, Վրաց-ադրբեյջանական հարաբերություններ:

РЕЗЮМЕ

**Создание ГУУАМ и тенденции развития региональных процессов
(конец 1990-ых гг.- 2004г.)**

Гарик Керян

Ослабление международных позиций России в 1990-ых годах способствовало развитию сепаратистских процессов на постсоветском пространстве. Малые страны СНГ стали еще недоверчивее относиться к российскому лидерству и активнее искать альтернативы ему. В 1997г. в Страсбурге представители Украины, Грузии, Азербайджана и Молдавии подписали соглашение об образовании союза, названного ГУАМ по первым буквам названий вошедших в него стран. С 1999 по 2005гг. к ГУАМ присоединился Узбекистан, после чего название организации стало выглядеть как ГУУАМ. Государства, члены ГУУАМ, искали пути выхода из-под влияния Москвы, считая его наносящим ущерб интересам их национальной безопасности.

Ключевые слова: Азербайджан, ГУУАМ, каспийская нефть, транспортный проход, экономическое сотрудничество, военно-политическое объединение, антироссийская позиция, Украина, Грузия, Баку-Джейхан, грузино-азербайджанские отношения.

SUMMARY

**Creation of GUUAM and Development Trajectories of Regional Processes
(the end of 1990 till 2004)**
Garik Keryan

The weakening geopolitical positions of Russia in 1990s contributed to the development of separatist processes on the Post-Soviet Space. Small countries of CIS (Commonwealth of Independent Countries) became more distrustful toward Russian leadership and were more actively looking for alternatives. In 1997 in Strasbourg the representatives of Ukraine, Georgia, Azerbaijan and Moldova signed an agreement on the formation of union, called GUAM on the first letters of the member states. Since 1999 till 2005 Uzbekistan had joined to GUAM as well, after which the name of the union changed for GUUAM. Member-States of GUUAM were looking for ways to overcome the influence of Moscow, considering it harmful to their interests of national security.

Keywords: *Azerbaijan, GUUAM Caspian oil, transport pass, economic cooperation, military-political union, anti-Russian stance, Ukraine, Georgia, the Baku-Ceyhan oil pipeline, Georgian-Azerbaijani relations*